

3.

Չլլարդէ եւ զլուսնահատոյնս պարզ քանիւ:
(ԺԷ).

Ծիլ ծիլ սսկի է վարդի թերթերըն

Որպէս և ասն նախնի ծերերըն.

Ահա մերձեցաւ գարնան ջ(և)րերըն՝ անոյշ օրերն.

Դեղգեղեալ գոչէ կանչէ հառաչէ՝ պիւլպիւլն երա-
մով իւրով.

Զայլ չայլ թեւերն ի տէր տարածեալ.

Ողբով և սրգով չեղև շատացեալ.

Ի վերայ վարդին կարօտահարեալ՝

Եւ սիրով վառեալ գեղգեղեալ . . .

Ծայլ ծայլ թերթերու վարդին թերարաց.

Հեղու զարտասուս նրման աղբերաց.

Նընջել և հանգչիլ նա ըստ օրինաց՝

Երբէք ոչ գիտաց. գեղ՛ . . .

Քիլ քիլ քայլելով և ոստոսելով.

Շուրջ զվարդենեօք շրջի ողբալով.

Ի ծագել լուսնոյն երկն յօրինելով

Քաջ յարմարելով գեղ՛.

Զիլ չիլ երամոց սոխակաց հաւուց.

Եհաս հովանի ի յոստոց թաւուց.

Դաշտք նրմանեցան բարեբեր նաւուց՝

Ի թեմն հովուց. գեղ՛ . . .

Զիլ զիլ ձայներով համեղ տաղերով.

Դինին սառուցէք փայլուն պաղերով.

Վարդըն փնջեցէք թօփ թօփ շաղերով.

Պուտ պուտ ցօղերով. գեղ՛.

Դիլ զիլ վայրերըն և լիլ լիլ տեղիք.

Դաշտք առապարք բըլբուրք և հովիտք.

Զարդարեալ ցնծան և համայն լերինք.

Ներքինք և վերինք գեղ՛ . . .

Քոյ բոյ վարդենեաց ի յոստոց ծայրէ

Ծոյլ ծոյլ թըռչոտի ի վայր ի վայրէ.

Գոյ զոյ արտասուօք ըզսիրան իւր այրէ՝

Ի փըշուտ վայրէ. գեղ՛ . . .

* *

Այս երեք օրինակով շատացանք առ այժմ մի
այլ առթի թողնելով Ղափանցու բոլոր տաղերի
հրատարակութիւնը, որոնց ամենի մէջ անխտիր
փայլում է բանաստեղծական կայծն ու տաղաչափա-
կան արուեստը. Այս արուեստը, որին երգիչը յա-
ճախ զօհում է և ներքին գեղեցկութիւնը, ժառան-
գութիւն է մեր միջնադարեան բանաստեղծների
համար. Այս ժառանգութեան մէջ շատ բան կայ օ-
տարածին և օտարամուտ, որ երբեմն կաշկանդել է

հանճարեղ երգիչներին ու խանգարել նրանց թռիչք-
ներին. Արուեստի այս կապող ու կաշկանդող ազդե-
ցութեան պէտք է վերադրել և այն աւելորդ ու ան-
յաջող տողերը, որ յաճախ խանգարում են բանաս-
տեղծութեան ամբողջութիւնը.

Ն. Զարամեանց.



ԱՌԱՃՆՆԵՐ ՎԱՆԱՅ ԲԱՐԲԱՌՈՎ

Ան կիբիբայ (կիբա),

Գամ խելացղ վրայ.

Դու արիւր որ, ես քն կերայ:

Աղէկ մանած էմէր,

Ուր խօր պատեց կախած կեմէր:

Անխամ խաբս խէրանց,

Անխամ փեսան աներանց:

Ապրայ արկնման,

Մեռայ մահն էման:

Արծու շինած,

Մկան աւիրած:

Արջ երկու աղբոր մօտէն կը վախնայ:

Բարդի ծառը կերթայ կուգայ սիրոյ տէր ի,
Ուտի ծառը կերթայ կուգայ դարտի տէր ի է:

Գարեկաց ցածրացաւ,

Կորեկ խաց բանցրացաւ:

Դանկով զարկիմ,

Բամբկով կալիմ:

Դիւուն դժոխք շանց չտաս՝

Արցայութենի շտիրանար:

Ես զովմաթ գուխս ի,

Ես անծեղ ջանդակս ի:

Ես քն մեռնիմ Վանայ լուսին,

Հեմ քուր ի, հեմ քնդ քնդ ի,

Քամբախ էղնի Շատխու լուսիկ

Հեմ ուղտտիկ ի, հեմ ժըթիկ ի,

Հեմ անլուսիկ ի:

Զարկիմ լանկայ, ազացի,

Ընկանց կատայ փորմանք,

Էմնուն ծով ի,

Վըր ձիկ սով ի:

Ըն աղուէս ի,

Ես էլ պոչ իմ:

Ըշ քրթեցին, պոչէն խողման:

Ըրէցն իթող մօլլէն ապով,

Մօլլէն իթող նրէցն ապով,

Կուրխան խոզով մարմնով.

Սեար սապիպ (պատճառը) մէկ մէկ ապով:

Ըրկնուց ցող առնի,

Գեմնուց պտուղ:

Ժածիկ, խորեմ քեօ մօր քածիկ:

Իմ խէրանց տուն չէն էղնի, կեր ու կործ.

Քամբախ էղնի կեսրանց տուն, կեր ու լուաց:

Իմնը կէր, մէկ էլ տաս.

Կօ նոր էկաւ մեր ծուռ խաբս:

Ս. Հայկունի.